

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Նոյն տեսարանը: Երեկոյ է. Վարագոյրը ըարծրանալիս ընմում տիրում է կիսախաւար: Բոլոր դռները ծածկուած են, միայն նախասենեակի դռների մի թեւը բաց է: Այնտեղից լուսոյ մի շերտ, թեք գծով անցնելով ընմով, ընկել է դաշնամուրի վրայ, որի քով Մարգարիտը նստած նուագում է ինչ-որ թախծալի եղանակ, Նրա ամբողջ մարմինը մթնումս է, միայն գլուխն է երեւում լուսոյ շերտի մէջ:

Մի առ ժամանակ ընմի վրայ, բացի Մարգարիտից, ոչ ոք չըկայ: Հեռու լւում է էլէքտրական զանգակի հնչիւն: Սեղանատան դռներից դուրս է գալիս Զարուհին եւ անցնում է օրիորդների սենեակները:

ՏԵՍԻՆ I.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԲԱԳՐԱՏ:

ԲԱԳՐԱՏ. (Դուրս է գալիս ծախ կողմի դռներից ֆռակով եւ կրծքին տեխնոլոգական ծեւարանի նշան, փողկապը կապելով): Միշտ մի և նոյն տխուր եղանակը օրուայ մի և նոյն միջոցին:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Նուագելով) Ասում են, ժամերն իրանց տրամադրութիւնն ունին: Երեկոներն ես տխրում եմ ու յուզւում և միշտ այս եղանակը յիշում:

ԲԱԳՐԱՏ. Եւ նուագում ես պօէտիքական մթութեան

մէջ որպէս իդէալական սիրահար: Բայց ինձ ներքի, ես ատուում եմ խաւարը: (Շուուէ տալիս սեղանատան դռները ձօտ էլէքտրական թնջի կոճակը):

Առատտաղից լաշ արած ջահը տարածում է պայծառ լոյս:

ՄԱՐԳԱՐԻՏ. Բաւական է: (Դաղարում է նուազել եւ դաշնամուրի կափարիչը ցած գցում: Նկատում է Բագրատի պատրաստութիւնը): Այդ ուր ես պատրաստուում:

ԲԱԳՐԱՏ. (Կանգնելով հայելու առջեւ, որ փողկապն ուղղի): Տեխնօլոգների երեկոյթը: Գնա, հագնուիր, քեզ էլ տանեմ: Ռօզալիան պատրաստում է: Դու այնտեղ կը տեսնես տեղական ինտելլիգենցիայի ընտիր մասը:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ինչո՞ւ ընտիր:

ԲԱԳՐԱՏ. Երեկոյթում միայն ինժեներներն են լինելու, Դու այնտեղ չես տեսնիլ ոչ պօրտֆէյլի և ոչ ռուբլու հերոսներին, այսինքն՝ ոչ իրաւաբաններին և ոչ բժիշկներին:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ինչպէս երևում է, շատ մեծ կարծիք ունիս քո մասնագիտութեան մասին:

ԲԱԳՐԱՏ. Եռանդի, խելքի և ժամանակիս իսկական ներկայացուցիչները ինժեներներն են, Կրգաս թէ՛ չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես տրամադրութիւն չունիմ երեկոյթ գնալու:

ԲԱԳՐԱՏ. Չըսիրեցի սկզբից և եթ այդ խօսքը— տրամադրութիւն: Մարդուս իրանիցն է կախուած այսպէս կամ այնպէս տրամադրել իրան: Ահ, այս անիծուածը չի կապում:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Մօտենում է, օգնում փողկապը կապելու): Քեզ համար հեշտ է այդ ասելը Դու հաշտում ես կեանքի բոլոր հանգամանքների հետ:

ԲԱԳՐԱՏ. Եթէ, ի հարկէ, հանգամանքներն արժանի չեն դիմադրութեան: Հակառակ դէպքում գիտեմ առողջ դատողութեամբ կուռել նրանց դէմ: (Մարգա-

րիտն ուղղել է Բագրատի փողկապը: Շնորհակալ եմ: (Շայնլով նղունգներին) Գիտես, սիրելիս, մեր ժամանակի միակ գերիշխանը բանականութիւնն է: Այս տեսակէտից ես չեմ կարող արգարացնել վերջին ժամանակուայ քո տխրութիւնը, որ արդէն սկսել է բողբոջի ձև ստանալ:

ՄԵՐԳԱՐԻՏ. Կը կամենայի ես էլ ուրախ լինել քրոջս պէս, թուկոտել, ինչպէս անհոգ թուշուն: Կը կամենայի ոչնչի մասին չքմտածել, բացի իմ անձնական զուարճութիւններից: Բայց, ի՞նչ արած, չեմ կարող: (Հառուչելով, արմունգները յենում է դաշնամուրին):

ԲԱԳՐԱՏ. (Հեզմաքար: Սիրահարուած ես, տանջուում ես մի անզուգական երիտասարդի, մի աննման իդէալիստի համար: (Լուրջ): Բաւական է, Մարգարիտ: Ես չունիմ իրաւունք քեզ յանդիմանելու, բայց այլ ևս լուել չեմ կարող: Բաւական է: Թո՛ղ երեխայութիւնդ: Դու չափահաս օրիորդ ես, պէտք է հասկանաս, որ չունիս իրաւունք սիրելու քո հարազատ ծնողի զրպարտչին:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Գլուխը քարծրացնելով) Իսկ եթէ նա զրպարտիչ չէ, այն ժամանակ:

ԲԱԳՐԱՏ. Դու համոզուած ես:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դրականապէս և նոանդով) Աւելի քան համոզուած եմ:

ԲԱԳՐԱՏ. Քոյր, ինձ թւում է, որ քո ուղեղը սկըսում է խանգարուել: Տխմար սիրոյ զգացումը հաբբեցրել է քեզ: Եթէ այդպէս շարունակես, ես քեզ էլ կատեմ, ինչպէս ատում եմ նրան:

ՄԵՐԳԱՐԻՏ. Ինձ համար այսուհետև միևնոյնն է: Ես ունիմ իմ ձեռքում փաստեր, որոնք քարերին անգամ կարող են համոզել, թէ մեր հայրը կողոպտել է մի որբ ընտանիք և կողոպտել է ամենայն անգթութեամբ:

ԲԱԳՐԱՏ. (Շփոթուած եւ, միեւնոյն ժամանակ, վըրդովուած) Մարգարիտ:

ՄԵՐԳԱՐԻՏ. Հայրիկի ցանկութեամբ ես Օթարեա-

նից պահանջեցի նրա դօկումենտները: Նա տուեց: Բազմաթիւ բռնութիւններ, ինչ-որ ասում է նա, զուտ ճշմարտութիւն է: Ահ, այս միտքը կարող է ինձ խելքից հանել: (Ընկած ծուած անցուղարձ է անում: Լռութիւն):

ԲԱԳՐԱՏ. (Շփոթուած, չը գիտէ ինչ ասէ): Դու ինձ բոլորովին շփոթեցրիր: Ո՞րտեղ են այժմ այդ գրաւոր ապացոյցները:

ՄԱՐԳԱՐԻՏ. Այնտեղ, իմ սենեակում, գրասեղանիս մէջ:

ԲԱԳՐԱՏ. Խօսել ես հայրիկի հետ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Այո:

ԲԱԳՐԱՏ. Ի՞նչ է ասում նա այդ փաստերի դէմ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ի՞նչ կարող է ասել մի յանցաւոր, որին ներկայացնում են իւր յանցանքի լուսանկարը: Նա շփոթուեց, կարմրեց, կապտեց, բայց հերքել, ի հարկէ, չըկարողացաւ: Գնա պարահանդէս, առաւօտը, եթէ կամենաս, կարող ես բոլորը կարդալ:

ԲԱԳՐԱՏ. Աա, ի՞նչ պարահանդէս: Ես ամեն ինչ մոռացայ: Ուրեմն ճիշդ է, որ մեզ սպառնում է սնանկութիւն:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ախ, քեզ սնանկութիւնն է անհանգըստացնում, իսկ ինձ տանջում է անպատուութիւնը: Այժմ ամեն ինչ կախուած է Օթարեանի կամքից:

ԲԱԳՐԱՏ. Նա կըկամենայ թէ անպատուել և թէ սնանկացնել մեզ: Նա սոսկալի՞քոխ ունի իմ դէմ: Ծոյց տուր ինձ: Ես ուզում եմ իմ աչքով տեսնել այդ թղթերը և անձամբ հաւաստիանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Ետդրողաւոր եւ եռանդով) Բայց զգո՛յ՛, նրանց ապահովութիւնը պատուովս եմ երաշխաւորել:

ԲԱԳՐԱՏ. (Վերաւորուած) Ես աւագակ չեմ, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Գնանք: Տես և համոզուիր, թէ ումի փողերով ես ուզում մեծ մեծ ձեռնարկութիւններ սկսել:

Գնում են խորքի ճախ դռներով, այն է՝ օրիորդների սենեակները:

ՏԵՍԻՆ Ի

ԱՆԴՐԷԱՅ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

Գալիս են նախասննուակից:

ԱՆԴՐԷԱՅ. Նա աղջիկ չէ ինձ համար, դատաւոր է: Ամբողջ գիշեր աչքերս չեմ փակել, ամբողջ օրը տանջուել եմ: Ես կարծում էի, որ այդ թղթերը կորած են: Էհ, ասում էի, կնիկ է, խելքը բան չի կտրիլ: Գիշ է պատահել, որ կանայք իրանց մարդուց մնացած հարկաւոր թղթերն այրել են: Բայց այդ մէկը յիմարններից չի եղել. պահել է, որ այսօր որդին գլխիս փորձանք բերի: Նա չի խնդրում, Սաղաթէլ, այլ, հոգեհանի պէս, պահանջում է, որ վիզս ծռեմ այդ լակոտի առջև, մեղայ դամ և տամ նրան կարողութեանս կէսը:

ՍԱՂԱԹԷԼ. Դու ինքդ աչքովդ տեսար այդ թղթերը:

ԱՆԴՐԷԱՅ. Տեսայ, բաս չէ: Նա ցոյց տուեց մօր մօտ: Կանգնեց հեռուում, մէկ մէկ կարդաց, յիշեցրեց բոլորը և յետոյ իսկոյն փակեց իւր գրասեղանի մէջ:

ՍԱՂԱԹԷԼ. Ի հարկէ, մայրն էլ պակասը քացրեց, պատմելով աղջկան իւր գիտեցածը:

ԱՆԴՐԷԱՅ. Օօ, քոյրդ Աստծու պատիժն է իմ գըլխին, ինձ պաշտպանելու տեղ, աւելի խայտառակեց աղջկայ մօտ: Ես կատաղեցի, յարձակուեցի վրէն, որ տեղն ու տեղը խեղդեմ նրան: Բարբաղդաբար, Մարդարիտը ժամանակին մէջ ընկաւ, չը թողեց: Նա փաթաթուեց մօր վզին: Պէտք է տեսնէիր, ինչպէս էր լաց լինում: Դիակիս վրայ էլ նա այնքան արտասուք չի թափիլ: Եւ յետոյ, երբ ուշքի եկաւ, ի՜նչ խօսքեր, Տէր Աստուած, ի՜նչ լեզու, Հայրիկ, ասում է, մոլորուել կարելի է, բայց պէտք է, պէտք է զղջալ, չը զղջալն աւելի մեծ անազնուութիւն է. սովորել այդ բաները:

ՍԱՂԱԹԷԼ, Ումից: Ի հարկէ, հէնց այդ լակոտից:



Դեռ Աստուած գիտէ էլի ինչեր սուլորեցրած կըլինի։
ԱՆԴՐԷՍՍ. Փորձեցի ինձ արդարացնել Ասացի, ընկերս մեռնելիս տափերը գին չունէին, եկամուտ չէին բերում, ի՞նչ կարող էի տալ որբերին։ Ասացի, յետոյ են թանգացել, ի հարկէ, իմ բաղդից, որովհետեւ եթէ մեռելը բաղդ ունենար—չէր մեռնիր։ Բայց ես խօսմ իմ ընկերով որբերին չեմ մոռացել։ Ես օգնել եմ, հիմայ էլ ուզում եմ օգնել, միշտ կօգնեմ, ձեռք վերցրու։ Ոչ, ասում է, դու պարտաւոր ես տալ նրանց բոլորը, ինչ-որ հասնում է օրէնքով, Լսո՞ւմ ես, Սաղաթէլ, բոլորը տալ։ Կարծում է, այդ կարելի բան է, կարծում է, որ դա փող չէ, թէկուզ գողացած փող։ Բայց փողը դեռ մի կողմ։ Իսկ պատի՛ւ։ Ի՞նչ կըմտածեն մարդիկ։ (Անց ու դարձ է անում)։

ՍԱՂԱԹԷԼ. Ինչ պիտի մտածեն։ Կասեն, որ էլիզբարովը գող էր և այժմ, դատաստանից վախենալով, գողացածը յետ է տալիս։ Արի ու այն ժամանակ երևացիր հասարակութեան մէջ։ Աչքերդ թքով կըհանեն։ Իսկ ես... ես քեզ կը համարեմ յիմարի մէկը...

ԱՆԴՐԷՍՍ. Մնում էր մի բան, այն էլ փորձեցի։ Ասացի, աղջի, սիրում ես այդ երիտասարդին, նա էլ քեզ է սիրում։ Էլ դրանից լաւ բան, եկ ձեզ պսակեմ։ Լաւ օժիտ կըտամ, տուն ու տեղ կըսարքեմ։ Տնւր ինձ թղթերը։

ՍԱՂԱԹԷԼ. Հըր՞, դրան ինչ ասաց։

ԱՆԴՐԷՍՍ. Ոչ, հայրիկ, ամում է, ես քեզանից փողի օժիտ չեմ ուզում, այլ պատուի օժիտ։ Քանի որ դու ընկերովդ գերեզմանի առջև մեղաւոր ես, ես չեմ կարող նրա որդու հետ բաղդաւորուել։ Նա ամեն բոպէ իրաւունք կունենայ երեսիս ասելու. «հայրդ կողպտել է հօրս»։ Այդ նախատինքն ես տանել չեմ կարող իմ ամուսնուց։

ՍԱՂԱԹԷԼ. Լեզուին նայիր, լեզուին։ Փիլիսոփայի պէս է խօսում։

ԱՆԴՐԷԱՍ. Այս, Մարգարիտն իւր պապի ժառանգն է, քո հօր կտորը՝ երէկ, երբ նա խօսում էր, ինձ թւում էր, որ նրա ետևում, պատի տակ, կանգնած է Տէր-Սիմօնը Աւետարանի խօսքերը բերանում:

ՍԱՂԱԹԷԼ. Բայց, ախար, հայրս հոգևորական էր, պարտաւոր էր ճշմարտութիւն քարոզել, իսկ մենք աշխարհականներ ենք, մեր բանն ուրիշ է: Ինչո՞ւ չեն հասկանում այդ կանայք:

ԱՆԴՐԷԱՍ. Հիմայ ճանապարհ ցոյց տուր ինձ, Սաղաթել, ինչ անեմ, ինչպէս ազատուեմ այդ լակոտից:

ՍԱՂԱԹԷԼ. Ինչ պիտի անես, Ինքդ վաղուց ես գրտել ճանապարհը: Արա այն, ինչ որ վճռել ես անելու:

ԱՆԴՐԷԱՍ. Այո, պէտք է անպատճառ անել, ուրիշ եւք չկայ: Ես հէնց դրա համար աշխատեցի, որ այդ թղթերը Մարգարտի ձեռքն անցնին:

ՍԱՂԱԹԷԼ. Բայց պէտք է անել շուտով, հէնց այս գիշեր, վազն ուշ կըլինի:

ԱՆԴՐԷԱՍ. Սուս, օտների ձայն եմ լսում: Գալիս են: Գնանք իմ սենեակը, այնտեղ կը մտածենք, ինչպէս գլուխ բերենք այդ բանը:

Գնում են աջ կողմի առաջին դռներով:

ՏԵՍԻՆ III

ՄԱՐԳԱՐԻՏ, ԲԱԳՐԱՏ ԵՒ ՌՕՋԱԼԻԱ

Դուրս են գալիս միաժամանակ օրհորդների սննեակից:

ԲԱԳՐԱՏ. (Յուզուել է): Բոլոր կասկածներս փարատուեցին, վտանգն անխուսափելի է:

ՌՕՋԱԼԻԱ. (Հագնուել է պարահանդիսի համար: Չեղնոցներն է հագնում): Ես էլ ասում եմ, քոյրս երէկ ինչ թղթեր էր քրքրում և ինձ տեսնելիս թագցնում: Ինչ ասել կուզի, երևելի սիրահարական նամակներ են— պայմանագրեր, առևտրական թղթեր, ֆի՛ր: (Մ'օտենում է հայելուն եւ դիտում իրան):

ԲԱԳՐԱՏ. (Մտազըտող, ձեռները մէջքին դրած, անցել է ընտի աջ կողմը): Աստ ինձ, Մարգարիտ, կարո՞ղ ես այդ թղթերը մի քանի օր պահել մօտդ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ոչ:

ԲԱԳՐԱՏ. Ինչո՞ւ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես խօսք եմ տուել վերագարձանել նրան:

ԲԱԳՐԱՏ. Ես կարծում եմ, նախ քան վերագարձանելը, հարկաւոր է մի լաւ մտածել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ի՞նչ ես ուզում ինձանից, պարզ ասա:

ԲԱԳՐԱՏ. (Տատանուելով) Ինձ թւում է, որ խելացի բան չէ մի այդպիսի զէնք վերագարձանել մեր հակառակորդին:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ի՞նչ, ուրեմն, դու պահանջում ես, որ ես...

ԲԱԳՐԱՏ. (Ստան) Որ դու այդ թղթերը չըտաս Օթարեանին:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Վրդովուելով) Ուրեմն դձև... Ամաչիք կրծքիդ նշանից, Բագրատ:

ԲԱԳՐԱՏ. (Գրգռուելով) Էհ, թո՛ղ այդ դատարկ ֆռազները, ի սէր Աստծու: Ես դիտեմ, որ այդ պարօնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվերոյ մաքեր: Բայց մենք ասպետների դարում չենք ապրում:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դառն հեզնութեամբ) Կարծես, մեծ ասպետութիւն է տարրական ազնուութիւն, հասարակ մարդկային խիղճ ունենալը:

ԲԱԳՐԱՏ. Խղճի և ազնուութեան մասին ամեն մարդիւր դաղափարն ունի: Էականն այն է, որ եթէ այդ թըղթերն անցնին Օթարեանի ձեռքը, ես կըզրկուեմ իմ գործարանից: Իսկ այդ կը նշանակէ ծովը նետել իմ բոլոր ծրագրները: Դու շատ լաւ դիտես, որ ես այդ գործարանով հիմք եմ դնում իմ ապագայ ոյժին, ազգեցութեանը և բաղդաւորութեանը: Ես ուզում եմ լինել հըզօր ֆինանսական սիւն, մէկն այն հսկաներից, որոնց

ձեռքումն է մեր ժամանակի ամենամեծ ոյժը—կապիտալը:

ՌՕՁԱԼԻԱ. Մի մարդ, որ կարող է հազարաւոր անգործների համար աշխատանքի դուռը բաց անել և խեղճ ընտանիքներ կերակրել: Ես քեզ հասկանում եմ, Բազրատ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Եւ այդ բոլորը ուրիշի փողերով:

ՌՕՁԱԼԻԱ. Ջաւակները պատասխանատու չեն իրանց հայրերի փոխարէն: Մեր ծնողների անցեալը մեզ համար մեռած պատմութիւն է:

ՄԱՐԳԱՐԻՏ. Որը սակայն այսօր յարութիւն է առել և արատաւորում է մեր ամբողջ գերդաստանը:

ԲԱԳՐԱՏ. Պէտք է, ուրեմն, խեղդել այն և նորից յանձնել գերեզմանին:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Խորին դառնութեամբ) Բազրատ:

ԲԱԳՐԱՏ. Ահ, ո՛ւմ հայրը չի զրկել մէկին կամ միւսին, այս կամ այն կերպ: Վերջապէս, հէնց նորերից ո՞ր մէկը չի զրկում կամ հարստահարում: Տարբերութիւնն այն է, որ հները զրկում էին հին ձեռով, նորերը զրկում են նոր ձեռով: Մարգարիտ, ներկայ դէպքում պէտք է լինել աւելի խելացի, քան զգայուն:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Խորին սրտմտութեամբ) Այսինքն աւելի շահամուլ, քան ազնիւ: Թոյլ տալ ծնողին կողոպտել մի որբ ընտանիք և փողոցները գցել: Մասնակից լինել նրա ծանր յանցանքին, շարունակել նրա սկսածը: Եւ ինչո՞ւ: Որպէս զի ապրենք այս փառայեղ պալատում, ոսկէզօծ կահ-կարասու մէջ, զուգուինք-զարդարուինք, բայեր ու պարահանդէսներ այցելենք: Ոչ ոչ, ես չեմ կարող և չեմ ուզում անել այդ: (Անցնում է դէպի ծախ):

ՌՕՁԱԼԻԱ. (Ատելութեամբ եւ գրգռուած) Տա տա, տա տա, ի՞նչ քաջն ես եղել: Ես չըգիտէի: Դու կատարեալ հերոսուհի ես:

ԲԱԳՐԱՏ. (Չգալով, որ շատ յստիշտակուեց), Մարգարիտ, ես յարգում եմ քո գաղափարները, բայց մի

յափշտակուիր: Մտածիր, ինչ մթնուրրտումն ենք ապրում: Մեր հասարակութեան մէջ թո՛ւ արածը ոչ ոքին չի հիացնիլ, ընդհակառակը, շատերը քեզ կը համարեն յիմար:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես հասարակութեան համար չեմ աւնում, այլ իմ խղճի համար:

ՌՕՋԱԼԻՍ. (Կատաղի) Ձգուում եմ այդ տեսակ ֆուզեօրններէց: (Բազրատին) Ձուր ես աշխատում նրան բան հասկացնել: Նրա վրայ միայն ոյժը կարող է ազդել: Խլիր նրա ձեռքէց այդ թղթերը, պրծաւ գնաց:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Երեսում է սեղանատան դռների մէջ):
ԲԱԳՐԱՏ. (Ծոյն մեղմ տօնով) Գոնէ վաղը մի յանձնիր: Սպասիր մի բանի օր, միասին կը խորհրդակցենք: Գու խելօք ես, չես կամենալ մեզ մեր թշնամու ձեռքը գցել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ահա մեր մայրը, թողէք, տեսնենք, նա ինչ է ասում:

ՏԵՍԻՆ 1 V

ՆՈՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՅԵՏՈՅ ՉԱՐՈՒՀԻ:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Առաջ է գալիս, ձեռները ծոցը դրած, տխուր): Այսքան տարի այդ մարդու արարքները թագցրի երեխաներիցս, Աստուծն է յայտնի ինչ տանջանքներով: Գիշեր-ցերեկ մտածել եմ այդ բանի մասին: Ժամանակ-ժամանակ բերան եմ բաց արել խօսելու, խօսքս կտրել է գոռոցով: Լուել եմ ու կրակս ներսումս պահել:

ՄԱՐԳԱՐԻՏ. Լսում էք:

ԲԱԳՐԱՏ. Մայրիկ, դու շատ ես լարուած հայրիկի դէմ:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Սրտմտութեամբ) Սուս, դու ոչինչ չը գիտես: Հայրդ իւր հոգին ծախել է Սաթայէլին: Երեկ գիշեր երազումս տեսայ հանգուցեալին: Կանգնած էր մեր դռների մօտ, վիզը ծուռը, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշուած: Նա ասում էր. «Երանուհի, դու խօս

գիտես, որ մենք ընկերներ ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստութիւնը, ինչո՞ւ ես թողնում, որ նա երեխաներիս զրկի մի կտոր հացից: Ախ, շատ եմ ուզեցել չը թողնել, բայց ո՞վ է ինձ լսել: Բագրատ, Բագրատ, իննը տարի է այդ մարդը գերեզմանից անիծում է մեզ:

ԲԱԳՐԱՏ. (Գրգռուած) Մեռելների անէծքի վրայ երկու արշին հող է ծանրանում:

ԵՐԱՆՈՒՀԻ. Ախ, մի խօսիր եղբօրս պէս, մեղք է: Մենք ամենքս պարտական ենք Ահեղ Գատաստանի առաջ: Ես էլ եմ պատասխանատու, որ չեմ կարողացել հօրդ հեռացնել շար ճանապարհից, ես դողում եմ սարսափից:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Հազիւ կարողանալով յուզմունքը զսպել): Ոչինչ, մայրիկ, հանգստացիր: Հայրիկը բարի է, խելօք է, նա իւր սխալը կուղղի:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Չեռով յուսահատական շարժումն է անում): Եէհ, որ մէկը...

ՋԱՐՈՒՀԻ. (Ներս է մտնում սեղանատնից) Կլուբից ձեզ տելեֆօնով խնդրում են:

ԲԱԳՐԱՏ. Ահ, այդ երեկոյթն էլ: Ես մոռացայ, որ կարդազրիչ եմ:

ՌՕՋԱԼԻԱ. Դէ, գնանք, շատ ուշացանք:

ԲԱԳՐԱՏ. (Մօտենում է Մարգարտին): Յոյս ունիմ, որ մինչև առաւօտ միտքդ կըփոխես:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Չափազանց ազդուել է ձօր խօսքերից, զգացում փաթաթում է նրա պարանոցին): Մայրիկ, ինչ լաւ սիրտ ունիս:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Շոյելով նրա գլուխը) Արի, աղջիկս, դու ես իմ միակ մխիթարութիւնը: Իրանք ուրիշ հոգի ունին, օտար են ինձ համար (Համըռուում է):

ԲԱԳՐԱՏ. Ատելով ատում եմ այդ տեսակ սանտիմենտայլ տեսարանները: (Դուրս է գալիս նախասենեակի դռներով):

ՌՕՁԱԼԻԱ. Պսիխոպատկա (Հետեւում է եղբորը).
 ՋԱՐՈՒՀԻ. (Ռօզալիային ուղեկցում է նախասենեակ):

ՏԵՍԻԼ V

ՄԱՐԳԱՐԻՏ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ. (Դուրս է գալիս ծախ կողմի դռներից).
 Գնաց, վերջապէս, եռանդուն կոմմերսանտը, ճարպիկ
 սպեկուլեանտը, աստառը շուր տուած ամերիկացին:
 Գեցցես, Մարգարիտ: Ես այնտեղից բոլորը լսում էի:
 Մամա, այս անգամ անառակ որդիդ բեզ հետ համա-
 ձայն է: Տուր ձեռդ համբուրեմ: Այսօր ես տեսնուեցի
 Օթարեանի հետ: (Մարգարտին). Թոյլ կըտան խօսել
 մայրիկի ներկայութեամբ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես մայրիկից դադանիք չունիմ:

ՍՈՒՐԷՆ. Պէտք է խոստովանած, որ ջենտլմեն տղայ
 է: Ես լաւ չէի ճանաչում նրան: Այսօր շատ հաւանեցի:
 Նա ասում է. «Ես աղքատ եմ, աղքատ էլ կը մնամ, միայն
 թէ Մարգարիտը չըդադարի ինձ սիրելը: Լսում ես.
 պէտք է մեծ սիրտ ունենալ, որպէս զի սիրոյ համար
 հրաժարուել ահագին ժառանգութիւնից: (Ջարոհուն,
 որ վերադարձել է սենեակից եւ ականջ է դնում): Կո-
 ըր, ինչ ես ականջ դնում:

ՋԱՐՈՒՀԻ. (Գնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ. Իսկ դու ինչ ասացիր նրան:

ՍՈՒՐԷՆ. Ե՞ս. ի՞նչ ես կարծում, ինչ կարող էր
 ասել ինձ նման մի գիժ: Ես նրան ասացի. «Արտաշէս,
 իմ քոյրը հպարտ աղջիկ է: Նա բեզանից զոհաբերու-
 թիւն չի ընդունիր: Ի՞նչ վեհանձնութեամբ նրանից գե-
 րազանցել չես կարող»:

ՄԱՐԳԱՐԻՏ. Շնորհակալ եմ:

ՍՈՒՐԷՆ. Սրանով էլ վերջացաւ մեր բանակցութիւ-
 նը: Այժմ լսեցէք իմ կարծիքը, ախար, Վերցь его деря,
 ես էլ ընտանիքի անդամ եմ: Եթէ ապացուցուած է, որ

մեր հայրը զրկել է Օթարեանին, ամենքս պարտաւոր ենք պահանջել, որ նա զրկուածներին բաւարարութիւն տայ:

ՄԱՐԳԱՐԻՏ. Մայրիկ, լսում ես, ինչ է ասում:

ՍՈՒՐԷՆ. Էհ, ի՞նչ ես մայրիկին խօսեցնում իմ մասին. նա ինձ վրայ խաչ է դրել: Ես շառւարտան եմ, փչացած: Բայց թող յայտնի լինի ձեզ, որ շուտով կըհրաժարուիմ իմ բաժին ժառանգութիւնից, քան կը համաձայնուիմ, որ մարդիկ երեսիս ասեն. «դու կողոպտիչի որդի ես»: Այս մէկն արդէն վճռուած է և ստորագրուած: (Սիգար է վառում):

ԵՐԱՆՈՒՀԻ. Խեղքս քեզանից բան չի կտրում: Համայդ ես ասում, համ էլ ինքդ կողոպտում ես հօրդ:

ՍՈՒՐԷՆ. Ա, դու մուրհակների մասին ես ակնարկում: Մամա, Աստուած վկայ, ես չեմ հնարել այդ բանը, այլ քեռիս, քո պատուարժան եղբայրը: Նա, օօ, նա Շէյլօկի խնամին է: Նա ինձ պարտք է տալիս միայն այն պայմանով, որ մէկին հինգ—տասը ստանայ հօրս մահից յետոյ: Բայց ազահուլութիւնը երբեմն մարդուն յիմարացնում է: Այժմ իմ պատուարժան քեռին վախենում է, որ հայրիկից շուտ կըճանապարհուի ի վերին Երուսաղէմ: Մամա, մի նեղանար, եղբայրդ մարդ չէ, այլ գայլի ախորժակից և աղուէսի խորամանկութիւնից կազմած վիճիգրետ: Իսկ ես թէև անառակ եմ, բայց ջենտլմեն եմ: Երէկ Բագրատն ինձ վախկոտ անուանեց: Իբր թէ ապտակ եմ կուլ տուել: Ուզում ես իմանալ, ինչու եմ կուլ տուել:

ԵՐԱՆՈՒՀԻ. Ես չեմ ուզում լսել այդ բաները, չեմ ուզում:

ՍՈՒՐԷՆ. Ոչ, այս մէկը լսիր: Ես ապտակը ստացել եմ մի շատ պատուական կնոջ պատճառով: Եթէ կուլ չը տայի, պիտի կուուէի, եթէ կուուէի, այդ կինը պիտի խայտառակուէր: Լսիր, ինչպէս պատահեց:

ԵՐԱՆՈՒՀԻ. (Ականջները փակելով) Ձեմ ուզում լսել, չեմ ուզում:

ՍՈՒՐԷՆ. Դէ լաւ, թող քնայ: Լսեցիր, Մարգարիտ, հայրիկը պարտաւոր է իւր անունն ազատել խայտառակութիւնից: (Ժամացոյցին նայելով) Օ, տաս և կէսն է, ես շոգիացայ...

ԵՐԱՆՈՒՀԻ. Էլի ուր ես գնում կէս գիշերին, անառակ...

ՍՈՒՐԷՆ. Ասողերն ուսումնասիրելու: Աւլովան ինձ սպասում է: Արեւիդերչի: (Գնում է նախաաննեակի դռներով, երգելով):

ՄԱՐԳԱՐԻՏ. Տեսնո՞ւմ, յայրիկ, շառլատան որդիդ աւելի ազնիւ է դատում, քան խելօքը:

ՋԱՐՈՒՀԻ. (Սեղանատան դռներից) Խոհարարը հարցնում է, ընթրելո՞ւ էք:

ԵՐԱՆՈՒՀԻ. Ես չեմ ուզում: Ահ, էլի գլխացաւ բռնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ես էլ չեմ ընթրելու: (Չարունհին զընում է): Մայրիկ, գնա, պառկիր, քո ներկերը բոլորովին բայքայտել են: Ես էլ ամբողջ գիշեր չեմ քնել, գլուխս պտտում է անքնութիւնից: (Համբուրում է մօր հետ եւ անցնում իւր սննեակը):

ԵՐԱՆՈՒՀԻ. (Նայելով նրա ետեւից թախծալի): Երանի, դու ինձանից բաղդաւոր լինիս: Ահ, (Վնցնում է սեղանատուն):

ՏԵՍԻՆ VI.

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

Դուրս են գալիս աջ կողմի առաջին դռներից, երբ Երանունին արդէն բոլորովին հեռացել է:

ԱՆԴՐԷԱՍ. Փառք Աստծու, վերջապէս, ցրուեցին: Այո՞, գիշերն աւելի լաւ է, քան ցերեկը: Մթութիւնը մեզբի ընկերն է:

ՍԱՂԱԹԷԼ. (Տէրողորմեայի հատիկները մէկ մէկ գցելով): Խէր, շառ, Աստուած: Խէր, շառ, Աստուած: Խէր, շառ, Աստուած: Խէր, Խնչքան գցում եմ, խէր է գալիս:

ԱՆԴՐԷԱՍ. Բայց սիրտս ասում է, որ լաւ բան չենք յտածել անելու:

ՄԱՂԱԹԷԼ. Աւելի վատ կըլինի եթէ չանես: Բացադրել ես, խնդրել ես, աղաչել ես, չի եղել, ճարգինչ, Խօսմ չես կարող պատիւդ թողնել թշնամուդ ձեռքում:

ԱՆԴՐԷԱՍ. Չանգակ տուր, տեսնենք ինչ են անում:

ՄԱՂԱԹԷԼ. Չայն-ձիւն չի լսում: (Մատը սեղմում է էլէքտրական զանգակի կոճակին, որ գտնուում է աջ պատի առաջին դռների մօտ: Բեմի ստեւից լսում է զանգակի թույլ հնչիւն):

ԱՆԴՐԷԱՍ. Քեզ համար ինչ, դու քո բանը դրստեցիր: Լաւ կուրտած է իմ մեղքն ինձ ծախելու համար - հինգ հարիւր սածեն տալ:

ՄԱՂԱԹԷԼ. Ես քեզ խնդրեցի, աղաչեցի, որ ինձ այս գործին խառնես:

ԱՆԴՐԷԱՍ. Դէ լաւ (Ջարուհուն, որ ներս է ստել սեղանատնից): Ո՞վ կայ սեղանատանը:

ՋԱՐՈՒՀԻ. Ոչ ոք:

ԱՆԴՐԷԱՍ. (Կեղծ լարկանալով) Բաս ինչո՞ւ ես ճրագները վառել: (Ջարուհին ուզում է գնալ): Խանութդ ինչ է անում:

ՋԱՐՈՒՀԻ. Հէնց հիմայ պառկեց: Էլի գլխացաւը բռնել է:

ԱՆԴՐԷԱՍ. Պրծանք, այդ էր պակաս: Կանչիր այստեղ Մարգարտին:

ՋԱՐՈՒՀԻ. Նա քնած է:

ԱՆԴՐԷԱՍ. Քնած, Այդպէս շուտ: Լաւ, դնա: Մենք կուրք ենք գնում, ասան խանութիդ: Դու էլ կարող ես հանգստանալ: Ես ինքս դռները կը փակեմ: Հարկաւոր չես, Հանգցրու սեղանատան ճրագները, դուք տնտեսութիւն ասած բանը չըգիտէք: Կարծես, ես փող եմ կորուսում կամ մարդ կողոպտում, որ ամեն ինչ չուայլում էք: Գնա:

ՋԱՐՈՒՀԻ. (Գնում է սեղանատուն: Փոքր անցած այնտեղ տիրում է մթուկիւն):

ՍԱՂԱԹԷԼ. Մէկը հիւանդ է, միւսը քնած, Աստուած ինքն է օգնում քեզ:

ԱՆԴՐԷԱՍ. Ահ, մի յիշիր այս բոպէին Աստծու անունը: Նա աւելի կըբարկանայ մեզ վրայ: Հըմ, լաւ էր, չէ, որ ասացի, թէ կուր ենք դնում: Տես, ով կայ նախասենեակում: (Սաղաթէլը նայում է դէպի նախասենեակ): Դռները կողպել: (Յուշիկ քայլերով մօտենում է Մարգարտի սենեակի դռներին եւ ականջ դնում: Նայում է իւր զրպանի ժամացոյցին եւ վերադառնում ընտի կենտրոնը):

ՍԱՂԱԹԷԼ. (Նախասենեակ նայելուց յետոյ դռները ծածկել է): Այնտեղ ոչ ոք չըկայ: Աւելի յարմար ժամանակ չէիր կարող ընտրել: (Տէրողորմեան դնում է զըրպանը): Ինչի մասին ես մտածում:

ԱՆԴՐԷԱՍ. Երբ սատանան մարդու գլխի մէջ մի շար միտք է մտցնում, սրտի մէջ էլ մի ահ է գցում: Մածկիր սեղանատան դռները: (Սաղաթէլը ծածկում է): Կարծես, այնտեղից աչքեր են նայում մեզ: Մօտս կաց: (Նստում է ըագկաթոռներից մէկի վրայ):

ՍԱՂԱԹԷԼ. (Գալով ընտի առաջ) Էհ, շատ բաներ ես արել, արա այդ մէկն էլ:

ԱՆԴՐԷԱՍ. (Կիսածայն) Արել: Ես մենակ չեմ արել, դու էլ միշտ հետս ես եղել: Էհ, էլի հօրդ կերպարանքըն եկաւ, կանգնեց աչքիս առջև: Նա ասում էր. «չարը չարութեան ճանապարհում կըկորչի»:

ՍԱՂԱԹԷԼ. Էհ, դու էլ ժամանակ գտար հօրս յիշելու:

ԱՆԴՐԷԱՍ. Յիսուն ու վեց տարեկան մարդ եմ, Սաղաթէլ, գլխովս հազար ու մի փորձանք է անցել: Երդում եմ կոտրել, միամիտներ եմ խաբել, խեղճեր եմ կռփել ու կողոպտել, երեք անգամ կաշառքով ազատուել եմ դատաստանից, բայց երբէք

այս դրուժեան մէջ չեմ եղել: Ինչիցն է այս, Սաղաթէլ: Այ, տես, սառը քրտինքը պատեց մարմինս:

ՍԱՂԱԹԷԼ. Վաղն այս ժամանակ կըհաշուես ու կըտեսնես, որ մօտ եօթ հարիւր հազար ուսուցիչ կալուածք է մնացել ձեռքումդ:

ԱՆԴՐԷԱՍ. Ադահուժիւն, աչքածակութիւն, ուրիշ ոչինչ:

ՍԱՂԱԹԷԼ. Էէհէ, դու սկսում ես դատողութիւններ անել: Շտապիր, գիշերն անցնում է:

ԱՆԴՐԷԱՍ. Ձը կարծես, թէ միայն փողի համար եմ անում, Սաղաթէլ: Ոչ, այլ այդ լակոտին խրատելու համար: (Վերէկենում):

ՍԱՂԱԹԷԼ. Ի հարկէ: Այստեղ պատուի խնդիր կայ, փողն ինչ...

ԱՆԴՐԷԱՍ. (Ատամները կըժտելով) Գոռոզ, անպարտաւան: Ուզում է ինձ խեղդել, ինձ, որ կարող եմ հարիւրին խեղդել այս ճանկերովս: Աա, եթէ ձեռքս կընդնին այդ թղթերը, ցոյց կըտամ քեզ, թէ ով եմ ես... Սուս, այդ ինչ ձայն է:

ՍԱՂԱԹԷԼ. Ես ոչինչ ձայն չեմ լսում:

ԱՆԴՐԷԱՍ. Դէհ, Անդրէաս, մի թուլանաւոր, ամօթ է: Արա այս մէկն էլ: Ինչ որ լինելու է, այն պիտի լինի: (Չգոյշ քայլերով անցնում է Մարգարտի սենեակը):

ՍԱՂԱԹԷԼ. Գայլը մտաւ դառների փարախը-կասէր հայրս. ԼԳօտնում է սեղանատան դռներին եւ լոյսը հանգցնում: Բեմում տիրում է խաւար): Այսպէս լաւ է, ինձ չեն տեսնիլ (Լռութիւն: Սեղանատնից լսում է ժամացոյցի տաւն ու մէկ զարկը): Հիմա ես էլ եմ վախենում:

Երկարատեւ լռութիւն):

ԱՆԴՐԷԱՍ. (Երեսում է դռների մէջ. չափազանց այլայլուած է, դողում է, քայց ուրսի է: Ձեռքում աւուրը քնած է թղթերի մի ծրար: Լռութիւն: Յետոյ շշնջիւնով): Սաղաթէլ:

ՍԱՂԱԹԷԼ. Այստեղ եմ: (Սննեակը նորից լուսաւորում է):

ԱՆԴՐԷԱՍ. (Առաջ է գալիս): Ահա նրա հոգին: Ահա ինձ քնից ու հանգստութիւնից զրկողը: Հարստութիւնս, անունս, պատիւս, եթէ հարիւր հազարի փրկութիւնը:

ՍԱՂԱԹԷԼ. Դէ, գնանք, հեռանանք այստեղից:

ԱՆԴՐԷԱՍ. Թող դեռ տեսնեմ, նրանք են թէ չէ: (Ժրարը զննում է): Իսկ և իսկ: Ինչպէս լաւ յաջողուեց: Նա քնած էր երեխայի պէս, գիրքը կրծքի վրայ բռնած: Բանալիները բարձի տակ էին: Վերցրի ու... Չայն չես լսում: (Ժրարը շտապով դնում է գրպանը):

ՍԱՂԱԹԷԼ. (Անհանգիստ) Լսում եմ: Հեռանանք:

Փողոցից լսում է ոստիկանական շուտցի ձայն:

ԱՆԴՐԷԱՍ. Աս, ոստիկանները գող են բռնում: Երեւի, խեղճերից մէկը, քաղցածութիւնից ստիպուած, գողացել է մի փալասի կտոր: Սճա, հեռանանք:

ՍԱՂԱԹԷԼ. (Մօտենում է աջ կողմի առաջին դռներին, մի վայրկեան կանգ առնում եւ անհետանում):

ԱՆԴՐԷԱՍ. (Հետեւում է նրան):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դուրս է գալիս գիշերային սպիտակ հագուստով: Ծայրում է աջ ու ձախ այլայլուած, նկատում է հօրը, որ այդ պահին արդէն դռների մօտ է: Ուժգին ցնցում է ու ծշում թոյլ): Հայրիկ: (Մի քանի քայլ առաջ է վազում եւ ըարծր ծշում): Հայրիկ:

ԱՆԴՐԷԱՍ. (Դռների միջից սարսափահար յետ է նայում եւ անհետանում):

ՄԱՐԳԱՐԻՏ. (Հեկեկալով ընկնում է յատակի վրայ):

Վարագոյրն իջնում է հանդարտ:

ՇԻՐՎԱՆՉԱԴԷ

(Վերջը միւս համարում)